

Վի. Հարությունյան

ՀԱՐՄԵԱՔԱՐ

ՀԱՅԴԵՏՐԱՏ

2087

891. 99

2-41

Thymus vulgaris

Знаменитый

In 504.

[illegible]

39190
Հ-41

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ


V

ՍՏՈՒԳԱՆ Է 1961 թ.

ՀԱՐՄՆԱՔԱՐ

~~8087~~

A 28339



ՀԱՅԿԵՏՀՐԱՏ

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1946

Շապիկը և նկարները Ա. ԶԻՂԱՆՅԱՆԻ

М. АРУТЮНЯН
МОГИЛА НЕВЕСТЫ

(На армянском языке)
Аргиз, Ереван, 1946 г.

ՆԱԽԵՐԳ

Ու Սեանա լիճը կղզուն հանգիստ օրոր էր ասում,
Կղզին նման քնած մանկան հեքյաթական երազում—
Մռայլ վանքի յթին խցից, որպես անհուն մի տրտունջ,
Հսկում էր հեզ մի տխուր երգ, սրտակեղեք մի մրմունջ:
—Ո՛վ հովվուհի, ինչու ես դու փակվել վանքի
նկուղում,

Որպես շողը մութ ամպի մեջ, որպես կյանքը խավարում,
Դու քո երկրի այծյամն ազատ, հավերժահարս Սեանի,
Քեզ համար է սարերն ընկել գեղարքա քաջ պատանին:
Ու Սեանա լիճն է ծփում ալիքներով ողբաձայն,
Գրկած մամուռ հարսնաքարը, որպես սիրո հուշարձան:

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

Սիրում էր տղան գնալ որս անել,
Մեն մենակ շրջել անտառներ, սարեր,
Ոտքի տակ առնել ժայռերը անառ,
Այծյամների հետ քերծեր բարձրանալ,
Կանգնել երկնասույզ լեռան կատարին
Ու նայել անվերջ Հայոց աշխարհին:
Ահա Սեանա լիճը զմրուխտյա,
Կարապն է լողում ջրերի վրա,
Կաքափն է ճախրում, իջնում քարերին.
Վաղորդյան ցողը թավիշ թևերին.
Նայում էր տղան և հանկարծ տեսավ,
Որ չքնաղ մի կույս հանգիստ հեզասահ,
Փշրելով լճի վճիռ հայելին,
Իր շուրջն առած ճերմակ սագերին,
Լողում է, ճոխփում ջուրը Սեանի,

Վարսերը փռած չքնաղ ուսերին:
Սագարած էր նա Սևանի ափին,
Զքնաղ Գեղարքի գեղանի փերին:
Որսկան պատանին էլ ռնց համբերի
Մոտեցավ լճի ժայռոտ ափերին:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

Սագերի հետ խաղում էր նա,
Զուրը ճողփում, ծիծաղում,
Զահել տղան ռնց դիմանա,
Սիրուց սիրտն էր նվաղում:
Սհա ելավ կույսը ջրից,
Շուրջը նայեց երկյուղով,
Զուր էր կաթում սև վարսերից,
Ծորում մարմար մարմնով:
Շորերն հագավ ծաղկանկար,
Որպես չքնաղ մի փերի
Սանրեց նա իր վարսերն երկար,
Լիճը արած հայելի:
Նետ աղեղը թողած ժայռին
Անհամարձակ ու անձայն,
Սիրավառված այն պատանին
Զքնաղ կույսին մոտեցավ:
— Մի վախենա, հրաշք աղջիկ,
Մեծ իշխանի թոռն եմ ես,
Սիրոս պարզ է նման լճին,
Որտեղ հիմա տեսա քեզ:
Մի ամաչի հավերժահարս,
Թուլլ տուր նայեմ աչքերիդ,
Սըտիդ աչքով նայիր վրաս:
Տուր ինձ վարդը այտերիդ:



ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

Փշուժ է փողը, զարկում է թմբուկ,
Խմբերգն է թնդում Սեանի ափին.
Հանդես հարսանյաց, ուրախ գինարբուք,
Կանգնած են կույսն ու որսկան պատանին:
Նստած է գահին Գեղարքա իշխան,
Գունատ այտերն են շիկնել հրճվանքից,
Շուրջը՝ զորապետներ, բազմած մեծարժան,
Որ նոր են դարձել հաղթական մարտից:
Ու բաժակն առավ իշխանը զառամ,
Եվ խոսեց որպես իմաստուն բարի.
— Թող կապվեն իրար սիրով անթառամ,
Պալատն իշխանիս և տունը ռամկի:
Մեր հայրենիքի բախտորոշ ժամին,
Ժողովուրդն է միշտ կանգնել մեզ պաշտպան:
Արդ որդուս համար իմ բարի կամքով
Ուզում եմ կույսին այս չքնադագեղ...
Նա որսի գնաց, տուն դարձավ հարսով:
Խնդաց ամբոխը, գինին վարարեց,
Սկավեց շուրջպար և՛ ծափ և՛ ծիծաղ,
Բայց հանկարծ մի պահ ամեն ինչ լռեց,
Վանքի զանգերի բոթը բարձրացավ:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

Եվ Արաբական ցեղերը վայրի,
Խուժեցին հողը Հայոց աշխարհի:
Մոխրակուլտ դարձան մեր գեղածիծաղ
Արտերը անծայր ու ալեծածան,
Գյուղեր, ավաններ, ավեր փլատակ
Ծխաց Գեղարքը մեր գեղաքանդակ:

Եվ իշխանորդին առավ նետ աղեղ,
 Համբուրեց հարսին իր չքնաղագեղ.
 — Ափսոս, — ասաց նա, — կյանքին մեր ջանել,
 Բայց երբ սրբազան մեր տունն են մտել
 Մեր սերն էլ, սիրտն էլ հանգիստ չի լինի...
 Երկիրն է կանչում իր կտրիճներին —
 Ու ելավ կանգնեց իշխանի որդին,
 Սրտաբուխ երգվեց հայ ժողովրդին,
 Մինչ վրեժ չառնի տուն չգա նորից
 Մինչ չհալածի Հայոց աշխարհից
 Զորքն Արաբական, լիրբ, արյունեղակ,
 Որ ծաղկի սերն և հողը ազատ:
 Ու կտրիճներով իր հերոսական,
 Սևանի սերսուսի սարերը ընկավ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

Ու գալիս էին խոլ ու մարդակեր
 Հորդաները բիրտ և բազմաչարիք,
 Թրատում էին լաթաղանով կեռ
 Ժողովրդին մեր. Հայոց աշխարհի:
 Ավա՛ղ, գերեցին և չքնաղ կույսին,
 Ա՛խ, նորահարսին մեր իշխանորդու:
 Ծեր զորապետը ժպիտն երեսին
 Աչքերում կիրքը ուղմատենչ մարդու —
 Մոտեցավ նայեց կույսին ամոթխած
 Շոյեց հինայած միրուքը դեղին
 Եվ գարշ քծնանքով ու բազկատարած
 Ցանկացավ գրկել կայտառ եղնիկին:
 Մինչ ասկյարները հրճվում էին
 Վայրի տենչանքով այն զորապետի,
 Հպարտ աղջկա գարկած ապտակից
 Ծեր բռնապետը թավալվեց գետին:

Սակայն ծիծաղեց խալիֆան այդ նենգ
 — Ի՞նչ ուժով առնեմ, այն էլ քաղցր է ինձ,
 Բայց տարեք սրան ու վանքը ձգեք,
 Մինչև ետ դառնամ հաղթական կովից:
 Ելավ վրանից և աչքով ագահ,
 Նայեց մեր չքնաղ Սևանա լճին,
 Հեծավ նժույգը իր արաբական,
 Որ ասպատակի գյուղերը վերջին...
 Խորհում էր: Հանկարծ դեմի ժայռերից
 Դուրս եկավ կտրիճ — իշխանի որդին:
 Եվ թունոտ նետը պրկված աղեղից
 Ցցվեց կրծքի մեջ գոռ զորապետի:
 — «Ձեռ տիրի երբեք դու հայ աղջկան,
 Սատակիր դահլիճ, սիրո և կյանքի»,
 Ձայնեց պատանին և անհետացավ
 Լեռնակիրճներում չքնաղ Գեղարքի...
 Մինչդեռ օրհասում զորապետը նեո,
 Թափեց ծեր սրտի թույնը աղծապիղծ.
 — Հայոց երկիրը չենք կարող տիրել,
 Բայց մինչ չավերեք, չեք իջնի թամբից:
 Իսկ այն աղջկա՜ն փակեցեք վանքում,
 Թող կարոտ մնա արևի լույսին,
 Իսկ երբ կթողնեք երկիրը հայոց,
 Կմորթեք նրան իմ գերեզմանին:

ՎԵՑԵՐՈՐԴ ԵՐԳ

Խավար գիշերի սև թարթիչներից
 Մնձրեն էր կաթում արցունքի նման,
 Եվ սև Սևանի սև սիրտ ջրերից
 Սյուլքն էր մրմնջում աշխարհի վրա...



Մարել են կղզու կրակներն արդեն,
 Շներն են հեռվում ոռնում լուսնահաչ,
 Կայծում էր վանքից մի հանգչող կանթեղ,
 Կտրիճն էր վարում նավակը առաջ:
 Մինչդեռ այդ ժամին խցում ցրտահար
 Աղոթք էր անում կույսը դավկադեմ,
 Իր քաջ սիրահար կտրիճի համար
 Աղոթք էր անում, բայց ում, չգիտեր:
 Արդյոք ասածն, բաց որտեղ է նա,
 Միթե չի լսում, չի տեսնում միթե,
 Որ այս բազմատանջ աշխարհի վրա
 Բարին, անարդար չարին չի հաղթել:
 Ու հանկարծ թնդաց գիշերվա մեջ մութ.
 — Հեյ, հեյ, բռնեցեք, փախցրին կույսին,
 Զահեր, հեյ, ջահեր, լաստեր բերեք շուտ:
 Ու տազնապահար արթնացավ կղզին:
 Պահակներն առած զենքեր ու ջահեր
 Լաստերով իջան լիճը Սեանա,
 Մինչ իշխանորդին շուրը ճողփում էր
 Առած աղջկան մակույկի վրա:
 — Նավիր իմ փրկիչ... մոտենում են, տես,
 Ա՛խ, դեռ հեռու են ավերը ծանոթ...
 Սուր նետերն էին սուլում օձի պես
 Ու շուրը ճողփում այն մակույկի մոտ...
 Ու չնկատեց կտրիճ պատանին
 Նետահար կույսին արդեն մահամերձ,
 Թունավոր նետը անսիրտ արաբի
 Զահել սրտերի սերը սպանեց:

Ալիքների դեմ խենթ ու լեռնապար
 Նավեց պատանին դեպ քարը մոտիկ,

Բարձրացավ փրկիչ քարը մամռապատ
 Հոգնատանջ, անգոր և արյունավիկ:
 — Փրկված ենք, անգին, ապա մի նայիր,
 Աստվածը քար է ուղարկել վերից,
 Որ հագարացոյ ձեռքերից նանիր
 Ապաստանի մեզ և կյանք տա նորից:
 ...Ձեր խոսում կույսը—մեռած էր աբգեն,
 Պատանին ողբաց, ողբադ խելագար,
 Եվ համբուրելով կույսին դալկադեմ,
 Նետահար արեց սիրտն իր սիրահար:

ՅՈԹԵՐՈՐԴ ԵՐԳ

Հեռվում ցոլաց արեգակի աչքը հուր,
 Ու նետվեցին դեպի կղզին Սևանի,
 Որպես Վահագն այն ծովածին քաջակուռ
 Հայրենաբաղձ կտրիճները իշխանի,
 Խուժում էին դեպի կղզին սրամերկ,
 Խուճապում էր նետահալած զորքն արաբ,
 Լիճն էր ծփում ալիքներով արնաներկ,
 Արեգակն էր փայլում պայծառ հաղթությամբ:
 — Ով մեծ իշխան, ահա դրոշն օտարի,
 Ազատ է արդ հողը արդար հայկազուն,
 Բայց չգտանք ոչ քո որդուն քաջարի,
 Միջ աղջկան, քո հեզ հարսին սիրասուն:
 Վշտի գիշերն իջավ սրտին իշխանի,
 Մթնեց հոգու երկինքը հոր դառնահուն,
 Ու լաստերով իջան լիճը Սևանի
 Որոնելով կորած կտրիճ պատանուն:
 Ու երբ հասան արնոտ քարին սգավոր,
 Ճերմակ հերքը փետեց իշխան ծերունին:



Федотов Н. 1846

Ընկած էին մամուռ քարին մենավոր,
 Իրար զրկած կույսն ու կտրիճ պատանին:
 Ու մղկտաց անհույս ձայնը իշխանի.
 — Չփրկեցի զավակներ ձեզ օտարից,
 Եվ մնացիք չքնաղ գրկում Սեանի,
 Հարսիս քարը, թող սուրբ կոչվի էս օրից:
 Խոնարհվելով կտրիճները զլխահակ,
 Համբուրեցին հարսնաքարը մենավոր,
 Հուզված լիճն էր ծփում կոհակ առ կոհակ,
 Մոր պես հուզված և մոր նման սգավոր:

ՎԵՐՋԵՐԳ


Մինչև այսօր զմրուխտացուլք Սեանում
 Կանգնած է դեռ հարսնաքարը մենավոր,
 Կաքաղիւներն են հիմա այնտեղ սեր անում,
 Ու տաղ ասում անհոգ, ուրախ, բախտավոր:
 Զահեխները իմ հայրենի աշխարհի
 Իջնում են այն մամուռ քարին հողմահար,
 Բռնում խայտոդ անուշ ձուկը իշխանի,
 Ու քեֆ անում հարսնաքարին սիրավառ:




Խմբագիր՝ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎՅ 10960, Պատվեր 341, Տիրաժ 5000: 0,8 տպ. մամ., 0,32 Հեղ. մամ.:
Ստորագրված է տպագրության 25/VII—46 թ.

ՀՅՍՍՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ Սովետին Կից Պոլիգր. և Հրատ. Վարչ. № 1 տպարան,
Երևան, 1946





ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028339

13903

ԳԻՆԸ 1 ռ. 50 Կ.

